ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված *Բագրատ Սերգեյի Բագրատյանի* «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության հայեցակարգային ապահովումը. հիմնախնդիրներ և զարգացման հնարավորություններ» թեմայով ատենախոսության վերաբերյալ

21-րդ դարի առաջին երկու տասնամյակում Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական իրադարձությունների վերլուծությունը հանգեցնում է այն հետևությանը, որ ազգային անվտանգության երաշխավորման գործընթացում առանձնացված կարևորվում է քաղաքականության ռազմավարական հենքայնությունը: Ազգային անվտանգության քաղաքականության տեսագործնական հիմնախնդիրների խմբավորման համատեքստում անվտանգության համակարգը կարելի է բովանդակային տեսակետից ներկայացնել տնտեսական, գիտատեխնիկական, տեղեկատվական, բնապահպանական, հոգևոր, սոցիալական, ռազմական, քաղաքական և այլ ոլորտների տարանջատմամբ: Այդ ենթահամակարգերից յուրաքանչյուրն իր հերթին ունի արտաքին ու ներքին կողմեր:

Բացի այդ, անվտանգության ապահովման գործում առաջնային է, որ անհատները, հասարակական կազմակերպությունները և պետական մարմիններն ակտիվ, գործուն մասնակցություն ունենան անվտանգության կառուցակարգերի ամրապնդման գործում: Անվտանգության ամրապնդման քաղաքականությունը պետք է հավասարակշռված հիմնվի անվտանգության ապահովման պետական ու ոչ պետական (հասարակական) ենթահամակարգերի վրա՝ հիմքում ունենալով հավասարակշռված գործառութային տարանջատումները:

Այս համատեքստում հարկ է փաստել, որ հրապարակային պաշտպանության ներկայացված աշխատանքը՝ նվիրված Հայաստանի անվտանգային քաղաքականության հայեցակարգային բարեփոխումների ուսումնասիրությանն, արդիական է, քանի որ հաջողված փորձ է համապետական զարգացումների համատեքստում ներկայացնել անվտանգության ներքին ու արտաքին համակարգում անցկացվող բարեփոխումների

տեսական-կիրառական հիմնախնդիրները և գիտականորեն հիմնավորել դրանց լուծման առաջարկություններ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, վերլուծված է նրա տեսական և գործնական նշանակությունը, տրված են հիմնական նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը և թեմայի մշակվածության աստիճանն, ինչպես նաև ձևակերպված են գիտական նորույթ պարունակող դրույթները:

Առաջին գլուխը վերնագրված է **«Ազգային անվտանգության քաղաքականության և դրա իրականացման տեսական-մեթոդաբանական հիմնահարցերը»** և ներառում է երեք ենթագլուխ: **«Ազգային անվտանգության ինստիտուցիոնալ սահմանման ու գնահատման առանձնահատկությունները»** առաջին ենթագլխում ներկայացված են ազգային անվտանգության հասկացությունն, ինստիտուցիոնալ առանձնահատկություններն, անվտանգային բարեփոխումների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվող տեսակետները: **«Փափուկ ու կոշտ քաղաքականությունների տարրերը Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգում»** երկրորդ ենթագլխում վերլուծված են անվտանգային քաղաքականության զարգացման էվոլյուցիան, տեսակային տարանջատման չափորոշիչները՝ հատուկ ընդգծելով քաղաքականության նորմատիվ-սահմանադրական հիմքերի հաշվառմամբ քաղաքական լիդերների անվտանգային դերակատարությունը: **«Ազգային շահերը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության համատեքստում»** երրորդ ենթագլխում եզրահանգում է արված, որ արդի բազմաշերտ զարգացումների ժամանակաշրջանում քաղաքակրթական բնույթի հակամարտությունները, հիմնախնդիրների ունիվերսալացումը և գլոբալացումը պարունակում են հոգևոր-մշակութային առճակատման և էքսպանսիայի տարրեր: Նման գործընթացներում շահում են այն ազգերը և երկրները, որոնք գործում են ավելի ակտիվ ու համակարգված, մինչդեռ կրավորական դիրքորոշում ընդունածների անվտանգությունը և բնականոն զարգացումը ենթարկվում են լուրջ փորձությունների: Այստեղից հետևում է, որ հոգևոր-մշակութային և այլ քաղաքակրթական հատկանիշներ ունեցող ռեսուրսներն ունեն ռազմավարական նշանակություն և մաս են կազմում այնպիսի հիմնարար արժեքի, ինչպիսին է՝ ազգային անվտանգությունը:

Երկրորդ՝ **«Ազգային անվտանգության քաղաքականության հենքային երաշխավորումը Հայաստանի Հանրապետությունում»** վերնագրով գլխի՝ **«Ազգային անվտանգության քաղաքականության հայեցակարգային ապահովումը Հայաստանի Հանրապետությունում 1991-2024 թթ.»** առաջին ենթագլուխը վերաբերված է Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության քաղաքականության զարգացումները 20-րդ դարի վերջին տասնամյակում և 21-րդ դարասկզբին: **«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթավորման արդի հիմնախնդիրները»** երկրորդ ենթագլխում հիմնավորված է, որ ռազմավարական փաստաթղթերի կազմման մշակույթը գործնականում կարևոր է նախ այն հանգամանքի հաշվառմամբ, որ դրա զարգացումը և առաջավոր փորձի որդեգրումը նպաստում են ՀՀ ազգային անվտանգության՝ որպես բարդ համակարգի ինստիտուցիոնալացմանը: Այնուհետև, քաղաքական իրականության մեջ անվտանգային հարցերի փաստաթղթավորումը թույլ է տալիս աստիճանաբար ձևավորել անվտանգային քաղաքականությունը երաշխավորող ռազմավարական փաստաթղթերի մշակման սեփական մշակույթը:

«Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության քաղաքականության ռազմավարական տեսլականը» երրորդ ենթագլխում ամփոփված է, որ գլոբալ անվտանգության արդի մարտահրավերները, մասնավորապես աշխարհակարգի փոփոխման միտումներն, ուժային կենտրոնների միջև մրցակցության սրումն, ազդեցության գոտիների բաժանման համար մղվող պայքարը էական ազդեցություն են ունենում Հայաստանի անվտանգային միջավայրի վրա: Փոփոխվող աշխարհակարգում միջազգային ավտանգային համակարգի կառուցվածքը դառնում է առավել անարխիկ, և միջազգային իրավակարգի էական թուլացման պայմաններում պետությունների համար առավել մեծ կարևորություն են ստանում անվտանգային բազմաշերտ ռեսուրսների կուտակումը, ինտեգրացիոն զսպումը, սեփական ուժերով անվտանգային կարիքների բավարարման հնարավորությունները և հիբրիդային սպառնալիքներին դիմակայելու հնարավորությունները:

Երրորդ գլուխը վերնագրված է **«Ազգային անվտանգության քաղաքականության ռազմավարական երաշխավորման ներպետական համակարգը»** վերնագրով և կազմված է երկու ենթագլխից: **«Ազգային անվտանգության քաղաքականության ներպետական կառուցակարգերի գնահատում (Հայաստանի Հանրապետության օրինակով)»** առաջին

ենթագլխում հիմնավորված է այն տեսլականը, որ մարդկային քաղաքակրթության և քաղաքական պատմության ընթացքում ձևավորվել է այնպիսի գաղափարախոսություն, որ անվտանգությունն իրենից ներկայացնում է բարդ հասարակական-քաղաքական երևույթ, որը կազմում է ոչ միայն պետության առաջնային նպատակը և հիմնական գործառույթը, այլ նաև հասարակության ու պետության զարգացման վեկտորի և հենց գոյության պայմանի հետ անմիջական կապ ունեցող հասարակական հարաբերությունների որոշակի վիճակ:

«Անվտանգության խորհրդի դերը ազգային անվտանգության ապահովման գործում (համեմատական վերլուծություն)» վերջին ենթագլխում վերլուծված են ազգային անվտանգության քաղաքականության համատեքստում վերգերատեսչական հիմնական հաստատության՝ անվտանգության խորհրդի իրավաքաղաքական կարգավիճակի առանձնահատկությունները, Հայաստանի Հանրապետությունում կառավարման մոդելով պայմանավորված զարգացումների համատեքստում այդ կոլեգիալ մարմնի կարգավիճակային փոփոխություններն, ինչպես նաև առաջիկա սահմանադրական բարեփոխումների շրջանակներում սպասվելիք ծրագրային աշխատանքները:

Բագրատ Բագրատյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսության վերաբերյալ կարելի է ներկայացնել նաև մի քանի դիտարկումներ, որոնք ավելի կընդգծեին աշխատանքի գիտատեսական արժեքայնությունը: Մասնավորապես.

1. Ատենախոսության առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում է նոր մոտեցում անվտանգային քաղաքականության տիպաբանության առումով՝ պետության ներքին ու արտաքին քաղաքականության համատեքստում ընդգծելով իրավանորմատիվային հիմքերի և քաղաքական լիդերների գործառնական չափորոշիչները: Նշված հետազոտական գնահատումների հենքի վրա կարելի էր ավելի համընդգրկուն ներկայացնել Հայաստանի Հանրապետության անվտանգային քաղաքականության տեսակային նկարագիրը և դրա փոփոխությունները զարգացման տարբեր շրջաններում:

2. Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում է ազգային անվտանգային ռազմավարության փաստաթղթավորման տեսամեթոդական մոտեցումների վերլուծություն: Նշված հետազոտական գնահատումների հենքի վրա կարելի էր ավելի կոնկրետացնել ռազմավարական մակարդակում պաշտոնական

դիրքորոշումների սկզբնավորման և ձևակերպման, ինչպես նաև դրանց կատարողականի ապահովման հիմնադրույթները:

3. Աշխատանքի երկրորդ և երրորդ գլուխներում վերլուծվում են համապատասխանաբար ՀՀ անվտանգային արտաքին ու ներքին քաղաքականություններին վերաբերող հիմնահարցեր: Որպես հայեցակարգային գնահատումներին վերաբերող աշխատություն՝ կարելի էր նաև դիտարկել ազգային անվտանգության ռազմավարության հաջորդական զարգացմամբ արտաքին և ներքին համապարփակ ռազմավարությունների, հայեցակարգերի առանձնացման՝ գիտահետազոտական հիմնավորմամբ առաջարկությունը:

Թեմայի արդիականությունը և հիմնավորված եզրահանգումները, ինչպես նաև ներկայացված առաջարկությունները հնարավորություն են տալիս փաստելու, որ Բագրատ Սերգեյի Բագրատյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության հայեցակարգային ապահովումը. հիմնախնդիրներ և զարգացման հնարավորություններ» թեմայով ատենախոսությունը լիարժեքորեն բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Ռուս-հայկական համալսարանի համաշխարհային քաղաքականության
և միջազգային հարաբերությունների ամբիոնի ավագ դասախոս,
քաղաքական գիտությունների թեկնածու Հայկ Յուրիկի Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոս Հայկ Թորոսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

02.02.2026թ

Ռուս-հայկական համալսարանի գիտական
քարտուղար, բանասիրական գիտությունների
թեկնածու Ռ. Կասաբաբովա

(կազմակերպության գիտ. քարտուղար)

(ստորագրություն և կնիք)